Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագիրը «բժշկական օգնության և սպասարկման իրականացման» բառերից հետո լրացնել «, դեղերի մեծածախ իրացման» բառերով.

2) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ և 10-րդ ենթակետերով.

«9) Հայաստանի Հանրապետությունում դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) Հայաստանի Հանրապետությունում դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 10 հավելվածի.».

3) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սահմանել, որ լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով: Առձեռն փաստաթղթեր

ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:».

4) որոշման N 1 հավելվածի 17.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17.1. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում համապատասխան որակավորում ունեցող անձի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը: Դեղերի արտադրության լիցենզիա ստանալուց հետո որակավորված անձի փոփոխության դեպքում լիցենզավորված անձը սույն կետով նախատեսված փաստաթղթերը լիազոր մարմին է ներկայացնում փոփոխություններից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: (Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:)».

5) որոշման N 3 հավելվածի՝

ա. 12-րդ և 13-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Դեղատնային գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը դեղատանը կամ դեղատնային կրպակում դեղերի ընդունում, պահպանում, իրացում և բացթողում կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված և պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատություն ավարտած, օրենքով սահմանված կարգով որակավորված և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստում անցած դեղագետների կամ դեղագործների միջոցով: Ընդ որում, դեղատնային գործունեության համար լիցենզավորված անհատ ձեռնարկատերը, եթե նա համապատասխանում է սույն կետով դեղագետին կամ դեղագործին ներկայացվող որակավորման պահանջներին, դեղատանը կամ դեղատնա-

յին կրպակում դեղերի ընդունում, պահպանում, իրացում և բացթողում կարող է իրականացնել անձամբ:

13. Դեղատնային գործունեությունը դեղատան միջոցով իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը դեղերի պատրաստում կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված և պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատություն ավարտած, օրենքով սահմանված կարգով որակավորված և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստում անցած դեղագետների միջոցով: Ընդ որում, դեղատնային գործունեությունը դեղատան միջոցով իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պետք է ունենա առնվազն մեկ դեղագետ՝ բացառությամբ այն դեպքի, երբ անհատ ձեռնարկատերը համապատասխանում է սույն կետով դեղագետին ներկայացվող պահանջներին:»,

բ. 16-րդ կետի 1-ին ենթակետի «դ» և «զ» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ. վտանգավոր թափոնների արկղի պահպանման սենյակ կամ վտանգավոր թափոնների արկղի պահպանման պահարան (լիցենզիա ստանալուց հետո),

զ. սանհանգույց՝ լվացարանով (լվացարանը կարող է տեղակայված լինել կամ սանհանգուցի ներսում կամ սանհանգույցի նախամուտքում),»,

գ. 16-րդ կետի 2-րդ ենակետի «բ» և «դ» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. վտանգավոր թափոնների արկղի պահպանման սենյակ կամ վտանգավոր թափոնների արկղի պահպանման պահարան (լիցենզիա ստանալուց հետո),

դ. սանհանգույց՝ լվացարանով. (լվացարանը կարող է տեղակայված լինել կամ սանհանգուցի ներսում կամ սանհանգույցի նախամուտքում),»,

դ. 43.1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) դեղատանը կամ դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականի և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականի, իսկ դեղագործի դեպքում՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագործի միջին մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը: (Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:)»,

ե. 45-րդ կետի 4-րդ ենթակետը «հայտատուին կամ,» բառերից հետո լրացնել « չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը կամ,» բառերով,

զ. 45-րդ կետի 5-րդ ենթակետում «24-29-րդ,» բառերը փոխարինել «26-28-րդ,» բառերով,

է. N N 1, 6 և 7 ձևերի 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)□□□□□□□□□□□

5. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) □□□□□□□□□□□»,

ը. N 1 ձևի 11-րդ կետի 4-րդ ենթակետը, N 6 ձևի 12-րդ կետի 4-րդ ենթակետը, N 7 ձևի 7-րդ կետը և 12-րդ կետի 4-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

թ. N 1 ձևի 11-րդ կետի 1-ին և 7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1.	Առևտրի սրահ (ներառյալ սպասասրահը)	12		□ ցուցադրման սեղաններ □ ցուցապահարաններ □ փակ պահարաններ □ վաճառասեղան □ սառնարան □ ջերմաչափ □ դեղատոմսերի ընդունման և պատրաստված դեղերի բացթողման համար նախատեսված հատված(լրացվում է միայն դեղատան դեպքում) □ ընդհանուր օգտագործման սպասասրահ (սույն կետը լրացվում է այն դեպքում, երբ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեղատնային կրպակը տեղակայված է հասարակական շենքում, որտեղ առկա է ընդհանուր օգտագործման սպասասրահ)
7.	Սանհանգույց՝ լվացարանով (լվացարանը կարող է տեղակայված լինել կամ սանհանգուցի ներսում կամ սանհանգույցի նախամուտքում)			□ սանհանգույցն առկա է լիցենզավորվող կազմակերպության կազմում □ սանհանգույցն առկա է հասարակական շենքերում (առևտրի կենտրոններում, սուպերմարկետներում և այլն), բժշկական հաստատություններում, վարչական շենքերում, մետրոներում, օդանավակայաններում, երկաթուղային և ավտոկայարաններում

»,

ժ. N N 6 և 7 ձևերի 12-րդ կետերի 1-ին և 7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1.	Առևտրի սրահ (ներառյալ սպասասրահը)	12		□ ցուցադրման սեղաններ □ ցուցապահարաններ □ փակ պահարաններ □ վաճառասեղան □ սառնարան □ ջերմաչափ □ դեղատոմսերի ընդունման և պատրաստված դեղերի բացթողման համար նախատեսված հատված (լրացվում է միայն դեղատան դեպքում) □ ընդհանուր օգտագործման սպասասրահ (սույն կետը

				լրացվում է այն դեպքում, երբ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեղատնային կրպակը տեղակայված է հասարակական շենքում, որտեղ առկա է ընդհանուր օգտագործման սպասասրահ)
7.	Սանհանգույց՝ լվացարանով (լվացարանը կարող է տեղակայված լինել կամ սանհանգուցի ներսում կամ սանհանգույցի նախամուտքում)			□ սանհանգույցն առկա է լիցենզավորվող կազմակերպության կազմում □ սանհանգույցն առկա է հասարակական շենքերում (առևտրի կենտրոններում, սուպերմարկետներում և այլն), բժշկական հաստատություններում, վարչական շենքերում, մետրոներում, օդանավակայաններում, երկաթուղային և ավտոկայարաններում

»,

ժա. N 7 ձևի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ժբ. N 7 ձևի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Հասցեափոխվող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

_____».

6) որոշման N 5 հավելվածի՝

ա. 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում գործունեության իրակա-նացման յուրաքանչյուր վայրի համար էլեկտրոնային առողջապահության համակարգն սպասարկող օպերատորի հետ կնքված էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագիրը, համապատասխան որակավորված անձի մասին տեղեկատվություն՝ կցելով համապատասխան որակավորում ունեցող անձի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն կամ Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1275-Ն որոշումների և

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասազերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագիրը: Լիցենզիա ստանալուց հետո բուժաշխատողի փոփոխության դեպքում լիցենզավորված անձը սույն կետով նախատեսված փաստաթղթերը լիազոր մարմին է ներկայացնում փոփոխություններից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: (Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:)»,

բ. 20-րդ կետի 4-րդ ենթակետը «հայտատուին կամ,» բառերից հետո լրացնել «չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը կամ,» բառերով,

գ. N 2 ձևը 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին կետով.

«8.1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառում և (կամ) բացթողում՝

□ այո

□ ոչ»,

դ. N N 2, 8 և 9 ձևերի 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)□□□□□□□□□□

5. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) □□□□□□□□□□»,

ե. N N 8 և 9 ձևերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին կետով.

«9.1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառում և (կամ) բացթողում՝

□ այո

□ ոչ»,

զ. N 9 ձևի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

7) որոշումը լրացնել նոր՝ N N 9 և 10 հավելվածներով՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո: